

ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ (ՀՀ ՎՊԽ) ՆԻՍՏԵՐ

05.09.2018թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ՝ Ս.Մնացականյանը,
ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ.Անանյանը, Գ.Գևորգյանը, Ա.Սաֆյանը, Ս.Դավթյանը,
Լ.Պետրոսյանը, Ն.Բաղդասարյանը
ՀՀ ՎՊԽ քարտուղար՝ Հ. Գրիգորյանը

Հրավիրված էին՝

ՀՀ ՎԿ գլխավոր քարտուղար Ա. Հայրապետյանը,
ՀՀ ՎԿ իրավաբանական բաժնի պետ Ա.Վարդանյանը,
ՀՀ ՎԿ նախագահի խորհրդական Լ.Միրզոյանը,
ՀՀ ՎԿ առևտրի և այլ ծառայությունների բաժնի պետ Ա.Հարությունյանը
ՀՀ ՎԿ աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը:

Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.

1. « «Տեղեկատվություն ապրանքների վաճառքի և մնացորդի վերաբերյալ» Ձև 3-առևտուր (տարեկան) վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2017 թվականի հուլիսի 14-ի թիվ 15-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա.Հարությունյան/

Որոշեցին՝

հաստատել «Տեղեկատվություն ապրանքների վաճառքի և մնացորդի վերաբերյալ» Ձև 3-առևտուր (տարեկան) վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը և ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի՝ 2017 թվականի հուլիսի 14-ի « «Տեղեկատվություն ապրանքների վաճառքի և մնացորդի վերաբերյալ» Ձև 3-առևտուր (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության

վիճակագրության պետական խորհրդի 2016 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ 12-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 15-Ն որոշումը:
Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 1-ից:

/Նորմատիվ/

2. «Տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվական ծառայությունների մասին» Ձև 1-SS (ամսական) վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևը հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա. Հարությունյան/

Որոշեցին՝

հաստատել «Տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվական յությունների մասին» Ձև 1-SS (ամսական) վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևը և լրացման հրահանգը՝ համաձայն հավելված 1-ի և 2-ի և ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2018 թվականի հունվարի 29-ի « «Տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվական ծառայությունների մասին» Ձև 1-SS (ամսական) պետական վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու և Հայաստանի հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2015 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 43-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 03-Ա որոշումը:

/Անհատական/

3. «Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից 2017 թվականին տնային տնտեսություններում իրականացված Աշխատուժի հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազան Աշխատանքի միջազգային կազմակերպության վիճակագրության դեպարտամենտին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Լ. Քալանթարյան/

Որոշեցին՝

թույլատրել տրամադրել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից 2017 թվականին տնային տնտեսություններում իրականացված Աշխատուժի հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազան Աշխատանքի միջազգային կազմակերպության վիճակագրության դեպարտամենտին զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

/Անհատական/

4. «Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից 2017 թվականին տնային տնտեսություններում իրականացված Աշխատուժի հետազոտության արդյունքում ձևավորված անվանագերծված տվյալների բազայից ֆորմալ հատվածի ոչ պետական կազմակերպություններում աշխատողների վարձատրությանը վերաբերող անվանագերծված միկրոտվյալներն ըստ աշխատողների զբաղմունքի տեսակների և ՀՀ վարչատարածքային բաժանման ՀՀ վարչապետի աշխատակազմի Քաղաքացիական ծառայության գրասենյակին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Լ. Քալանթարյան/

Որոշեցին՝

թույլատրել ՀՀ վիճակագրական կոմիտեի աշխատանքի վիճակագրության բաժնին՝ տրամադրել ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից 2017 թվականին տնային տնտեսություններում իրականացված Աշխատուժի հետազոտության արդյունքում ձևավորված անվանագերծված տվյալների բազայից ֆորմալ հատվածի ոչ պետական կազմակերպություններում աշխատողների վարձատրությանը վերաբերող անվանագերծված միկրոտվյալներն ըստ աշխատողների զբաղմունքի տեսակների և ՀՀ վարչատարածքային բաժանման զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չիրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

/Անհատական/

17.09.2018թ. նիստին

Մասնակցում էին՝

- ՀՀ ՎՊԽ նախագահ՝ Ս.Մնացականյանը,
- ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ.Անանյանը, Գ.Գևորգյանը, Ա.Սաֆյանը, Ն. Բաղդասարյանը, Ս.Դավթյանը, Լ. Պետրոսյանը,
- ՀՀ ՎՊԽ քարտուղար՝ Հ. Գրիգորյանը

Հրավիրված էին՝

- ՀՀ ՎԿ գլխավոր քարտուղար Ա.Հայրապետյանը,
- ՀՀ ՎԿ իրավաբանական բաժնի պետ Ա. Վարդանյանը,
- ՀՀ ՎԿ նախագահի խորհրդական Լ.Միրզոյանը,
- ՀՀ ՎԿ գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ Մ.Երիցյանը,
- ՀՀ ՎԿ տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Լ. Մարկոսյանը:

Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.

1. «Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից՝ 2010-2016 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությունների անվանազերծված տվյալների բազաները «Ազգային հիփոթեքային ընկերություն» վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն ՓԲԸ-ին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Լ. Մարկոսյան/

Որոշեցին՝

թույլատրել տնային տնտեսությունների վիճակագրության բաժնին՝ «Ազգային հիփոթեքային ընկերություն» վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն ՓԲԸ-ին տրամադրել ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից 2010-2016 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությունների արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազաները: Տվյալները կարող են օգտագործվել բացառապես հետազոտական նպատակներով, չեն կարող փոխանցվել այլ անձանց, չեն կարող հրապարակել անվանական հարթության անվանազերծված որևէ տվյալ և համադրվել այլ աղբյուրներից ստացված անվանական տվյալների հետ, նշվելու են բոլոր հրահանգավորված նյութերի աղբյուրները, այդ անվանազերծված տվյալները հետազոտություններից հետո ոչնչացվելու են:

/Անհատական/

2. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2017 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 27-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Լ. Մարկոսյան/

Որոշեցին՝

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2017 թվականի դեկտեմբերի 18-ի «2017 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 27-Ն որոշմամբ հաստատված հավելված 3-ի 19-րդ և 20-րդ կետերի «Թողարկման (հրապարակման) ժամկետը» սյունակում «սեպտեմբեր» բառը փոխարինել «նոյեմբեր» բառով:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

/Նորմատիվ/

3. «Գյուղատնտեսական մթերք արտադրողի կողմից իրացված մթերքի քանակների, արժեքների և միջին գների վերաբերյալ» (ըստ իրացման ուղիների) 1-ԳԻՆ ԳՅՈՒՂ (իրացման գին) (ամսական), «Գյուղատնտեսական արտադրության միջոցների գնման քանակների, արժեքների և միջին գների վերաբերյալ» 2-ԳԻՆ ԳՅՈՒՂ (գնման գին) (ամսական) ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2017թ. նոյեմբերի 13-ի թիվ 28-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու և «Գյուղատնտեսական արտադրանք արտադրողի կողմից իրացված արտադրանքի քանակների և միջին գների վերաբերյալ» 1-ԳԻՆ ԳՅՈՒՂ (իրացման գին) (ամսական) հարցաթերթը,

«Գյուղատնտեսական արտադրության միջոցների գնման քանակների և միջին գների վերաբերյալ» 2-ԳԻՆ ԳՅՈՒՂ (գնման գին) (ամսական) հարցաթերթը,

«Գյուղատնտեսական արտադրանք արտադրողի կողմից իրացված արտադրանքի քանակների և միջին գների վերաբերյալ» 1-ԳԻՆ ԳՅՈՒՂ (իրացման գին) (ամսական) և «Գյուղատնտեսական արտադրության միջոցների գնման քանակների և միջին գների վերաբերյալ» 2-ԳԻՆ ԳՅՈՒՂ (գնման գին) (ամսական) հարցաթերթերի լրացման հրահանգները հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Մ.Երիցյան/

Որոշեցին՝

Ուժը կորցրած ճանաչել ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2017թ. նոյեմբերի 13-ի թիվ 28-Ա որոշումը և հաստատել «Գյուղատնտեսական արտադրանք արտադրողի կողմից իրացված արտադրանքի քանակների և միջին գների վերաբերյալ» 1-ԳԻՆ ԳՅՈՒՂ (իրացման գին) (ամսական),

«Գյուղատնտեսական արտադրության միջոցների գնման քանակների և միջին գների վերաբերյալ» 2-ԳԻՆ ԳՅՈՒՂ (գնման գին) (ամսական),

«Գյուղատնտեսական արտադրանք արտադրողի կողմից իրացված արտադրանքի քանակների և միջին գների վերաբերյալ» 1-ԳԻՆ ԳՅՈՒՂ (իրացման գին) (ամսական) և «Գյուղատնտեսական արտադրության միջոցների գնման քանակների և միջին գների վերաբերյալ» 2-ԳԻՆ ԳՅՈՒՂ (գնման գին) (ամսական) հարցաթերթերի լրացման հրահանգները:

/Անհատական/

Լսեցին՝

4. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

4.1. Հաղորդում՝ Նորվեգիայի Օսլո քաղաքում սեպտեմբերի 12-ից 14-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի /ՄԱԿ-ի ԵՏՀ, UNECE/ վիճակագրության բաժին, Նորվեգիայի վիճակագրական ծառայություն և Եվրոպական ազատ առևտրի ասոցիացիայի /ԷՖՏԱ, EFTS/ կողմից կազմակերպված, մարդկային ռեսուրսների կառավարումն և վերապատրաստում /ՄՌԿՎ/: Վիճակագրական ծառայությունների ադապտացումը փոփոխվող պայմաններին, խորագրով աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Ա.Հայրապետյան/

4.2. Հաղորդում՝ Ռուսաստանի դաշնության Սանկտ Պետերբուրգ քաղաքում սեպտեմբերի 12-ից 14-ը Ռուսաստանի պետական վիճակագրության դաշնային ծառայության կողմից կազմակերպված «Կայուն զարգացման նպատակների մշտադիտարկման համար վիճակագրական կարողությունների բարելավում» խորագրով միջազգային սեմինար և Կայուն զարգացման նպատակների վիճակագրության գծով ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կառավարող խմբի հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Ա.Սաֆյան/

Որոշեցին՝

արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունելի գիտություն

/Անհատական/

19.10.2018թ. նիստին

Մասնակցում էին՝

- ՀՀ ՎՊԽ նախագահ՝ Ս.Մնացականյանը,
- ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ.Անանյանը, Գ.Գևորգյանը, Ա.Սաֆյանը, Ն.Բաղդասարյանը, Լ.Պետրոսյանը, Ս.Դավթյանը,
- ՀՀ ՎՊԽ քարտուղար՝ Հ. Գրիգորյանը

Հրավիրված էին՝

- ՀՀ ՎԿ նախագահի խորհրդական Լ.Միրզոյանը,
- ՀՀ ՎԿ իրավաբանական բաժնի պետ Ա.Վարդանյանը,
- ՀՀ ՎԿ տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Լ. Մարկոսյանը,
- ՀՀ ՎԿ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ.Կոյունջյանը,
- ՀՀ ՎԿ շինարարության վիճակագրության բաժնի Մ.Պետրոսյանը,
- ՀՀ ՎԿ բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի պետ Վ.Արևշատյանը,
- ՀՀ ՎԿ աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ.Քալանթարյանը,
- ՀՀ ՎԿ առևտրի և այլ ծառայությունների բաժնի պետ Ա.Հարությունյանը,
- ՀՀ ՎԿ արդյունաբերության և էներգետիկայի վիճակագրության բաժնի պետ Ա.Անանյանը,
- ՀՀ ՎԿ սոցիալական ոլորտի և բնապահպանության բաժնի պետ Ա.Գրիգորյանը,
- ՀՀ ՎԿ սոցիալական ոլորտի և բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ Ա.Հակոբյանը,
- ՀՀ ՎԿ արդյունաբերության և էներգետիկայի վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Հ.Հովհաննիսյանը,
- ՀՀ ՎԿ սոցիալական ոլորտի և բնապահպանության բաժնի առաջատար մասնագետ Ն. Մանդալյանը,
- ՀՀ ՎԿ ֆինանսների վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Ա. Օհանջանովը,
- ՀՀ ՎԿ տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման բաժնի առաջին կարգի մասնագետ Մ. Չապանյանը,

ՀՀ ՎԿ աշխատանքի վիճակագրության բաժնի առաջին կարգի մասնագետ

Ս. Զեյնալյանը,

ՀՀ ՎԿ միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի առաջին կարգի մասնագետ Ա. Նալբանդյանը:

Նիսպում լսվեցին հեղեղալ հարցերը.

1. «Աշխատողների թվաքանակի, աշխատած ժամերի, աշխատողի վրա գործատուի կատարած ծախսերի մասին» Ձև թիվ 1-Ա (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և դրա լրացման հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2013 թվականի նոյեմբերի թիվ 23-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Լ.Քալանթարյան/

Որոշեցին՝

Հաստատել «Աշխատողների թվաքանակի, աշխատած ժամերի, աշխատողի վրա գործատուի կատարած ծախսերի մասին» Ձև 1-Ա (տարեկան) վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը համաձայն հավելված 1-ի և 2-ի, ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2015 թվականի նոյեմբերի 13-ի «Աշխատողների թվաքանակի և աշխատավարձի մասին» Ձև թիվ 1-Ա (ամսական), « «Աշխատողների թվաքանակի և աշխատավարձի մասին» Ձև թիվ 1-Ա (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերը և դրանց լրացման հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2013 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 30-ն, 31-ն և 32-ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 23-Ն որոշումը: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 1-ից:

/Նորմատիվ/

2. «Առևտրի շրջանառության մասին» Ձև 1-առևտուր (ամսական) վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2017 թվականի հուլիսի 14-ի թիվ 08-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին, «Առևտրի շրջանառության մասին» Ձև 1-առևտուր (փոքր) (եռամսյակային) վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2017 թվականի հուլիսի 14-ի թիվ 09-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին, «Սպառողական ապրանքների և գյուղատնտեսական արտադրանքի շուկաներում առևտրի կետերի հաշվառման մասին» Ձև 1-շուկա (ամսական) վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2017 թվականի հուլիսի 14-ի թիվ 10-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին, «Ծառայությունների ծավալի մասին» Ձև 1-ծառայություններ (ամսական) վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2017 թվականի հուլիսի 14-ի թիվ 12-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին,

«Ծառայությունների ծավալի մասին» Ձև 1-ծառայություններ (փոքր) (եռամսյակային) վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2017 թվականի հուլիսի 14-ի թիվ 13-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին, «Ընդհանուր տեղեկություններ առևտրի օբյեկտների մասին» Ձև 1-հաշվառում (եռամսյակային) վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2017 թվականի հուլիսի 14-ի թիվ 14-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին, Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2017 թվականի հուլիսի 14-ի թիվ 16-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին, Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2017 թվականի հուլիսի 14-ի թիվ 17-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա.Հարությունյան/

Որոշեցին՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի թվով 8 վիճակագրական հաշվետվությունների ձևերն ու լրացման հրահանգները և դրանց հին ձևերի ուժը կորցրած ճանաչելու մասին ներկայացրած որոշումների նախագծերը:

/Նորմատիվ/

3. «Կատարված շինմոնտաժային աշխատանքների մասին» Ձև 1-ԿՇ (ամսական) և Ձև 1-ԿՇ (տարեկան), «Օբյեկտների, հիմնական միջոցների գործարկման և շինարարության իրականացման մասին» Ձև 2-ԿՇ (ամսական) և Ձև 2-ԿՇ (տարեկան), «Բնակչության միջոցների հաշվին անհատական բնակելի շենքերի գործարկման մասին» Ձև ԱԲՇ (ամսական), «Բնակչության միջոցների հաշվին տարբեր նշանակության օբյեկտների (բացի բնակելի շենքերից) գործարկման մասին» Ձև ՄՇ (ամսական) վիճակագրական հաշվետվության ձևերն ու լրացման հրահանգները հաստատելու և ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2016 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ 11-Ն, 2015 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 18-Ն և թիվ 19-Ն, 2012 թվականի հուլիսի 9-ի թիվ 13-Ն և թիվ 14-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Մ.Պետրոսյան/

Որոշեցին՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի թվով 5 վիճակագրական հաշվետվությունների ձևերն ու լրացման հրահանգները և դրանց հին ձևերի ուժը կորցրած ճանաչելու մասին ներկայացրած որոշումների նախագծերը:

/Նորմատիվ/

4. ««Իրավաբանական անձանց վիճակագրական բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի մասին» Ձև 1-ԲՌ (տարեկան), «Անհատ ձեռնարկատերերի վիճակագրական բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի մասին» Ձև 2-ԲՌ (տարեկան) վիճակագրական հաշվետվությունները ու դրանց լրացման հրահանգները հաստատելու և

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2017 թվականի հուլիսի 14-ի թիվ 06-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

Ձեկուցող՝ Վ.Արևշատյան/

Որոշեցին՝

հաստատել «Իրավաբանական անձանց վիճակագրական բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի մասին» Ձև 1-ԲՌ (տարեկան) վիճակագրական հաշվետվությունը և լրացման հրահանգը համաձայն հավելված 1-ի և 2-ի, «Անհատ ձեռնարկատերերի վիճակագրական բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի մասին» Ձև 2-ԲՌ (տարեկան) վիճակագրական հաշվետվությունը և լրացման հրահանգը համաձայն հավելված 3-ի և 4-ի և ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2017 թվականի հուլիսի 14-ի ««Իրավաբանական անձանց վիճակագրական բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի մասին», «անհատ ձեռնարկատերերի վիճակագրական բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի մասին» պետական վիճակագրական հարցաթերթերը և դրանց լրացման հրահանգները հաստատելու և ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2012 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 31-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 06-Ն որոշումը:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 1-ից:

/Նորմատիվ/

5. «Տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կազմակերպությունների գործունեության մասին» 1-սոցսպաս, «Թանգարանների գործունեության մասին» 1-թանգարան, «Թատրոնների գործունեության մասին» 1-թատրոն, «Հայտնաբերված վարչական իրավախախտումների, վարչական պատասխանատվության երթարկված անձանց թվաքանակի եվ նշանակված տուգանքների չափերի մասին» 1-վի, «Բնակարանային ֆոնդի մասին» 2-բնակֆոնդ, «Գրադարանների գործունեության մասին» 6-գմ, «Ժամանակավոր անաշխատունակության, դժբախտ պատահարների և վնասվածքների մասին» 7-ժավ, «Նախադպրոցական հիմնարկների մասին» 85-գմ, «Մանկատների գործունեության մասին» 1-մանկատուն, «Քաղաքների ճանապարհային տնտեսության մասին» 1-բարեկարգվածություն, «Բնակարանային ֆոնդի մասին» 1-բնակֆոնդ, «Բնական և հեղուկ գազի օգտագործման մասին» 1-գազ, «Գիշերօթիկ հաստատությունների գործունեության մասին» 1-գիշերօթիկ, «Գիտատեխնիկական աշխատանքների կատարման մասին» 1-գիտություն, «Համերգային կազմակերպությունների գործունեության մասին» 1-համերգ, «Քաղաքների տարածքի մեքենայացված սանմաքրման մասին» 1-հատուկ տրանսպորտ, «Ջրմուղի աշխատանքի մասին» 1-ջրմուղ, «Կոյուղու աշխատանքի մասին» 1-կոյուղի, «Գրքերի, բրոշյուրների հրատարակության մասին» 1-հրատարակություն, «Կինոարտադրող կազմակերպությունների գործունեության մասին» 1-կինո, «Թերթերի և այլ պարբերականների հրատարակման մասին» 1-մամուլ, «Անշարժ գույքի մասին» 1-օտարում, «Որդեգրման մասին» 1-որդեգրում, «Երաժշտական, գեղարվեստի, արվեստի դպրոցների, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնների մասին» 1-եգադ, «Բարձրագույն կրթության երկրորդ աստիճանի կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների և կազմակերպությունների գործունեության մասին» 1-գմ, «Բարձրագույն կրթության երկրորդ աստիճանի կրթական ծրագրեր իրականացնող ոչ պետական ուսումնական հաստատությունների և կազմակերպությունների գործունեության մասին» 1-գմ-1,

«Ֆիզկուլտուրայի և սպորտային աշխատանքների մասին» 1-սպորտ, «Նախնական (արհրեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների մասին» 2-գմ, «Նախնական (արհրեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ոչ պետական ուսումնական հաստատությունների մասին» 2-գմ-1, «Բարձրագույն մաստագիտական պետական ուսումնական հաստատությունների մասին» 3-գմ, «Բարձրագույն մաստագիտական ոչ պետական ուսումնական հաստատությունների մասին» 3-գմ-1, «Հետբուհական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և կազմակերպությունների գործունեության մասին» 4-գմ հաշվետվության ձևերն ու հրահանգները հաստատելու և «Քաղաքային հողերի և կանաչապատ տարածքների մասին» հաշվետվության ձևն ու հրահանգը ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա.Հակոբյան/

Որոշեցին՝

հաստատել ներկայացված երեսունմեկ որոշումները ըստ նախագծերի:

/Նորմատիվ/

6. ««Կազմակերպության արդյունաբերական արտադրանքի մասին» Ձև 1-արտ (ամսական), «Կազմակերպության արդյունաբերական արտադրանքի մասին» Ձև 1-արտ (եռամսյակային) և «Կազմակերպության արդյունաբերական արտադրանքի մասին» Ձև 1-արտ (տարեկան) վիճակագրական հաշվետվության ձևերն ու դրանց լրացման հրահանգը հաստատելու և ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2017 թվականի հուլիսի 14-ի թիվ 05-ն և 2015 թվականի փետրվարի 13-ի թիվ 04-ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու», ««Հիդրոէլեկտրակայանի գործունեության մասին» Ձև 1-ՀԷԿ (տարեկան) վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու և ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2016 թվականի նոյեմբերի 14-ի թիվ 17-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու», ««Էլեկտրական էներգիայի հաշվեկշիռն ու բաշխումը ըստ տնտեսության ճյուղերի» Ձև 1-ԷԷ (տարեկան) վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման կարգը հաստատելու և ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2017 թվականի մայիսի 6-ի թիվ 04-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու», ««Էներգակիրների արտադրության, սպառման և պահուստների մասին» Ձև 1-Էներգետիկա (տարեկան) վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Վիճակագրության պետական խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ 43-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու», ««Ջերմաէլեկտրակայանի գործունեության մասին» Ձև 1-ՋԷԿ (տարեկան) վիճակագրական հաշվետվության ձևը հաստատելու և ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2016 թվականի նոյեմբերի 14-ի թիվ 16-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա.Անանյան/

Որոշեցին՝

հաստատել ՀՀ վիճակագրության պետական խորհրդի թվով հինգ վիճակագրական հաշվետվությունների ձևերն ու լրացման հրահանգները և դրանց հին ձևերի ուժը կորցրած ճանաչելու մասին ներկայացրած որոշումների նախագծերը:

/Նորմատիվ/

7. «ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից՝ 2011 և 2014-2016 թվականներին իրականացված «Երեխաների կարիքները» հետազոտությունների անվանազերծված տվյալների բազաները ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի Հայաստանյան գրասենյակին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Լ. Մարկոսյան/

Որոշեցին՝

թույլատրել ՀՀ վիճակագրական կոմիտեի տնային տնտեսությունների վիճակագրության բաժնին՝ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի Հայաստանյան գրասենյակին (այսուհետև՝ գրասենյակ) տրամադրել ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից 2011 և 2014-2016 թվականներին իրականացված «Երեխաների կարիքները» հետազոտությունների արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազաները: Տվյալները գրասենյակի կողմից կարող են օգտագործվել բացառապես հետազոտական նպատակներով, չեն կարող փոխանցվել այլ անձանց, չեն կարող հրապարակել անվանական հարթության անվանազերծված որևէ տվյալ և համադրվել այլ աղբյուրներից ստացված անվանական տվյալների հետ: Գրասենյակի կողմից արված հղումներում նշվելու են բոլոր հրահանգավորված նյութերի աղբյուրները, իսկ անվանազերծված տվյալները հետազոտություններից հետո ոչնչացվելու են:

/Անհատական/

Լսեցին՝

8. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

8.1. Հաղորդում՝ Դանիայի Կոպենհագեն քաղաքում 2018 թվականի օգոստոսի 27-ից 30-ը «Եվրոպական հարևանության գործիքի ներքո ընթացող միասնական տեղեկատվական համակարգի ներդրման արևելյան երկրորդ փուլի (ԵՀԳ-ԵԲՄՏՀ II Արևելք/ENI-SEIS II EAST) շրջանակներում ԵՀԳ Եվրոպական ակադեմիայի ամառային դպրոցում անցկացվող «Շրջակա միջավայրի ինտեգրված գնահատում» թեմայով դասընթացին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Ն. Մանդայան/

8.2. Հաղորդում՝ Թուրքիայի Ստամբուլ քաղաքում 2018 թվականի սեպտեմբերի 10-ից 14-ը ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի (UNFPA) «Տղաների նախընտրության և աղջիկների թերարժևորման կանխարգելմանն ուղղված գլոբալ ծրագրի» շրջանակում կազմակերպված՝ «Սեռի խտրական ընտրության կանխարգելմանն ուղղված» միջազգային ուսուցման դասընթացին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Կ. Կոյումջյան/

8.3. Հաղորդում՝ Լիբանանի Բեյրութ քաղաքում 2018 թվականի սեպտեմբերի 13-ից 14-ը ՄԱԶԾ/ՄԱԿ-ի բնապահպանական ծրագրի Ազգային հաղորդագրությունների և Երկամյա առաջընթացի զեկույցների գլոբալ աջակցության ծրագրի կողմից կազմակերպված չափումների, հաշվետվայնության և հավաստագրման (ՉՀՀ) համակարգի, ինչպես նաև թափանցիկության մասով փորձի փոխանակման աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկույցող՝ Հ.Հովհաննիսյան/

8.4. Հաղորդում՝ Դանիայի Կոպենհագեն քաղաքում 2018 թվականի սեպտեմբերի 19-ից 21-ը Եվրոպական բնապահպանական միասնական տեղեկատվական համակարգի ներդրման արևելյան երկրորդ փուլի (ENI SEIS II East) օդի որակի մոնիթորինգի և հաշվետվողականության վերաբերյալ տարածաշրջանային աշխատաժողովին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկույցող՝ Ն.Բաղդասարյան/

8.5. Հաղորդում՝ Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2018 թվականի սեպտեմբերի 24-ից 28-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի (ԵՏՀ) և ԱՊՀ վիճակագրական միջպետական կոմիտեի հետ համատեղ կազմակերպված Մարդահամարների և կացարանների հաշվառումների վերաբերյալ աշխատաժողով և Մարդահամարների և կացարանների հաշվառումների փորձագիտական խմբի հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկույցող՝ Գ.Գևորգյան/

8.6. Հաղորդում՝ Իռլանդիայի Դուբլին քաղաքում 2018 թվականի սեպտեմբերի 27-ից 28-ը Արևելյան գործընկերության Պլատֆորմ 4-ի 2017-2020թթ. աշխատանքային ծրագրի (Ծրագիր) շրջանակում կազմակերպված «Թվային տվյալների և Արդյունաբերություն 4-ի դարաշրջանում հմտությունների կանխատեսման կատարելագործումը» խորագրով աշխատաժողովին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկույցող՝ Լ.Քալանթարյան/

8.7. Հաղորդում՝ Իսպանիայի Բիլբաո քաղաքում 2018 թվականի սեպտեմբերի 27-ից 28-ը ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի վիճակագրական բաժանմունքի (UNECE/ՄԱԿ ԵՏՀ)՝ Բասկերի համալսարանի և Օքսֆորդի բնակչության ծերացման ինստիտուտի և Իսպանիայի Բիսկայայի կառավարության աջակցությամբ կազմակերպված «Ակտիվ ծերացման ինդեքս» խորագրով երկրորդ միջազգային աշխատաժողովին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկույցող՝ Կ.Կույումջյան/

8.8. Հաղորդում՝ Բուլղարիայի Սոֆիա քաղաքում 2018 թվականի սեպտեմբերի 23-ից հոկտեմբերի 4-ը Բուլղարիայի Հանրապետության ազգային վիճակագրական ինստիտուտի, Բուլղարիայի արտաքին գործերի նախարարության և Ազգային և համաշխարհային տնտեսագիտության համալսարանի կողմից կազմակերպված «Վարչական կարողությունների և ժողովրդավարական ինստիտուտների կառուցում» ծրագրի շրջանակում վիճակագրական ոլորտի դասընթացին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Ա.Օհանջանով, Մ. Չապանյան, Ա. Ջեյնայան, Ա.Նալբանդյան/

8.9. Հաղորդում՝ Ղազախստանի Շիմքենտ քաղաքում 2018 թվականի հոկտեմբերի 1-ից 3-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի, Եվրոպական ազատ առևտրի ստոցիացիայի և ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տնտեսական և սոցիալական հանձնաժողովի և Ղազախստանի Հանրապետության վիճակագրության կոմիտեի օժանդակությամբ կազմակերպված Վիճակագրության 13-րդ SPECA (ՄԱԿ-ի Կենտրոնական Ասիայի երկրների տնտեսությունների հատուկ ծրագիր) աշխատանքային խմբի հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Ս. Մնացականյան, Ա. Սաֆյան/

8.10. Հաղորդում՝ Մոլդովայի Քիշնև քաղաքում 2018 թվականի հոկտեմբերի 2-ից 4-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի, Եվրոստատի, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության, Ազատ առևտրի եվրոպական ստոցիացիայի, ՄԱԿ-ի վիճակագրական դեպարտամենտի և Մոլդովայի ազգային վիճակագրական բյուրոյի կողմից համատեղ կազմակերպած «Ռեսուրսներ-օգտագործում աղյուսակներ» թեմայով աշխատանքային խորհրդակցությանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Ս.Մովսիսյան /

8.11. Հաղորդում՝ Ղազախստանի Աստանա քաղաքում 2018 թվականի հոկտեմբերի 2-ից 4-ը Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի ազգային վիճակագրական գրասենյակների և ոլորտային նախարարությունների TransMonEE ցանցային հանդիպմանը (Անչափահասների արդարադատության և անչափահասների նկատմամբ բռնության ոլորտում վիճակագրության հավաքագրում) մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Ա.Գրիգորյան/

8.12. Հաղորդում՝ Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2018 թվականի հոկտեմբերի 2-ից 4-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված կլիմայի փոփոխության վիճակագրություն արտադրողների և օգտագործողների համար փորձագիտական համաժողովի աշխատանքներին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Ն.Բաղդասարյան/

8.13. Հաղորդում՝ Ֆրանսիայի Փարիզ քաղաքում 2018 թվականի հոկտեմբերի 8-ից 12-ը Էներգիայի միջազգային գործակալության կողմից կազմակերպված Էներգետիկայի վիճակագրության 16-րդ դասընթացին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Հ. Հովհաննիսյան/

8.14. Հաղորդում՝ Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2018 թվականի հոկտեմբերի 14-ից 15-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի Բյուրոյի հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Ս. Մնացականյան, Ա. Սաֆյան/

8.15. Հաղորդում՝ Թաիլանդի Թագավորության Բանգկոկ քաղաքում 2018 թվականի հոկտեմբերի 14-ից 15-ը «Քաղաքականություն-տվյալներ կապը. Եվրամիության-Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի երկրների փորձի փոխանակում» թեմայով տարածաշրջանային բարձր մակարդակի աշխատաժողովին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Վ. Դավթյան/

Որոշեցին՝

արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունելի գիտություն:

/Անհատական/

31.10.2018թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ՝ Ս.Մնացականյանը,
ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ.Անանյանը, Գ.Գևորգյանը, Ա.Սաֆյանը, Ն.Բաղդասարյանը,
Լ.Պետրոսյանը, Ս.Դավթյանը,
ՀՀ ՎՊԽ քարտուղար՝ Հ. Գրիգորյանը

Հրավիրված էին՝

ՀՀ ՎԿ նախագահի խորհրդական Լ.Միրզոյանը,
ՀՀ ՎԿ իրավաբանական բաժնի պետ Ա.Վարդանյանը,
ՀՀ ՎԿ վիճակագրական տեղեկատվության տարածման բաժնի պետ Ն. Մուշեղյանը,
ՀՀ ՎԿ տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ
Լ. Մարկոսյանը,
ՀՀ ՎԿ բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի պետ
Վ.Արևշատյանը,
ՀՀ ՎԿ որակի կառավարման բաժնի պետ Ռ. Շաբոյանը,
ՀՀ ՎԿ որակի կառավարման բաժնի առաջին կարգի մասնագետ Ա. Գրբոյանը:

Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.

1. «ՀՀ 2019-2023 թվականների վիճակագրական հնգամյա ծրագրի» նախագիծը հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ն.Մուշեղյան/

**Որոշեցին՝
հաստատել «ՀՀ 2019-2023 թվականների վիճակագրական հնգամյա ծրագիրը»՝
համաձայն հավելվածի:**

/Նորմատիվ/

Լսեցին՝

2. «ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից՝ 2016 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազան Միգրացիային միջազգային կազմակերպությանը տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Լ. Մարկոսյան/

Որոշեցին՝

թույլատրել ՀՀ վիճակագրական կոմիտեի տնային տնտեսությունների վիճակագրության բաժնին՝ Միգրացիային միջազգային կազմակերպությանը տրամադրել ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից 2016 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազան: Տվյալները կարող են օգտագործվել բացառապես հետազոտական նպատակներով, չեն կարող փոխանցվել այլ անձանց, չեն կարող հրապարակել անվանական հարթության անվանազերծված որևէ տվյալ և համադրվել այլ աղբյուրներից ստացված անվանական տվյալների հետ, նշվելու են բոլոր հրահանգավորված նյութերի աղբյուրները, այդ անվանազերծված տվյալները հետազոտություններից հետո ոչնչացվելու:

/Անհատական/

Լսեցին՝

3. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.
3.1. Հաղորդում՝ Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2018 թվականի հոկտեմբերի 10-ից 17-ը «Աշխատանքի միջազգային գրասենյակի (ԱՄԳ) կողմից կազմակերպած Աշխատանքի վիճակագիրների 20-րդ միջազգային համաժողովին» մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Գ. Գևորգյան/

3.2. Հաղորդում՝ Միացյալ Արաբական Էմիրությունների Դուբայ քաղաքում 2018 թվականի հոկտեմբերի 22-ից 24-ը Դաշնային մրցունակության և վիճակագրության մարմնի (FCSA) և ՄԱԿ-ի վիճակագրության բաժնի (UNSD) կողմից կազմակերպված ՄԱԿ-ի տվյալների համաշխարհային ֆորումին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Ս. Մնացականյան, Ա. Սաֆյան/

3.3. Հաղորդում՝ Վրաստանի Թբիլիսի քաղաքում 2018 թվականի հոկտեմբերի 22-ից 26-ը Եվրոպական ազատ առևտրի ասոցիացիայի կողմից կազմակերպված «Տարբեր եղանակներով և տարբեր աղբյուրներից ստացվող տվյալների միավորում» խորագիրը կրող դասընթացին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Վ. Արևշատյան, Ա. Գրբոյան /

3.4. Հաղորդում՝ Ուկրաինայի Կիև քաղաքում 2018 թվականի հոկտեմբերի 23-ից 25-ը Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ) կողմից կազմակերպված «Պաշտոնական վիճակագրության մոդերնիզացում» խորագրով Արևելյան Եվրոպայի, Կովկասի, Կենտրոնական Ասիայի երկրների համար բարձր մակարդակի սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Գ. Անանյան, Ռ. Շարոյան/

3.5. Հաղորդում՝ Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2018 թվականի հոկտեմբերի 25-ից 26-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի (ԵՏՀ) կողմից կազմակերպված «Բնապահպանական վիճակագրության և ցուցանիշների» համատեղ աշխատանքային խմբի 15-րդ նիստ մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող Ն.Բաղդասարյան/

Որոշեցին՝

արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունելի գիտություն:

/Անհատական/